ՀՏԴ 37(479.243)

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Էլլադա Բաղդասարյան
մ.գ.թ., դոցենտ
Արցախի պետական համալսարան
Արցախ

Անոտացիա

Ժամանակակից կրթության զարգացումը համաշխարհային մակարդակի, բազմակողմանի, լայնամասշտաբ գործընթաց է: Կրթությունը անընդհատ վերափոխվում է, կատարելագործում բովանդակությունը՝ ձգտելով մոտենալ տեխնիկական և տեխնոլոգիական հեղափոխության արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Համաշխարհային մանկավարժության և դպրոցի զարգացման կարևոր դրական միտումներից են՝ կրթության հումանացումը, անձնակողմնորոշված մոտեցման ապահովումը:

Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանը այլ բովանդակություն հաղորդելու միջոցով:

Բանալի բառեր՝ *ժամանակակից կրթության զարգացում, տեխնոլոգիական հեղափոխություն, սոցիալական, մանկավարժական պահանջներ, համաշխարհային մանկավարժություն, դպրոցի զարգացում, դրական միտումներ, կրթության հումանացում, անձնակողմնորոշված մոտեցման ապահովում:*

Մանկավարժական գիտությունը ժամանակակից հասարակության զարգացման կարևորագույն գործոնն է, որը պետք է ապահովի կրթական համակարգի փոխակերպումը նոր պայմաններին համապատասխան: Այդ փոխակերպումը նախ և առաջ ենթադրում է կրթական հարացույցի փոփոխություն:

Կրթական հարացույցի փոփոխությունը ենթադրում է.

- Մանկավարժական հարաբերությունների վերակողմնորոշում դեպի սովորողի անձը,
- Սովորողի ինքնավարության ձևավորում, նրա ստեղծագործական կարողությունների, քննադատական մտածողության զարգացում,
- Սովորողների ճանաչողական, որոնողական, ստեղծագործական գործունեության կառավարում:

Աշխարհի առաջատար երկրներում մանկավարժական և հասարակական շրջանների ուշադրության կենտրոնում գտնվում է *կրթության ժողովրդավարացման խնդիրը*: Գոյություն ունեն այդ խնդրի երկու տարբեր մոտեցումներ: Մեկը հիմնված է էգալիտարիզմի /էգալիտարիզմ՝ համընդհանուր հավասարություն/ գաղափարի և համակրթական միօրինակության վրա: Մյուսը ելնում է կրթության դիվերսիֆիկացիայի անհրաժեշտությունից՝ համաձայն անհատական առանձնահատկությունների, հակումների և շահերի:

Ժամանակակից մանկավարժության գաղափարային բազան մշտապես նորացվում և շտկվում է: Ժամանակակից մանկավարժության մեջ ուշագրավ հայեցակարգերի թվին կարելի է դասել՝

- *ավանդական հարացույցը,*
- *ռացիոնալիստական մոդելը,*
- *ֆենոմենոլոգիական ուղղությունը*:

Ավանդականությունը աջակցում է կրթության, որպես մշակութային արժեքների վերաթողարկողի, պահպանողականության գործառույթների դերի պահպանման գաղափարներին: Կրթությունը դիտարկվում է որպես երիտասարդ սերունդներին անցյալի մշակույթի և արժեհամակարգի փոխանցման ունիվերսալ գործիք: Ավանդականության ներկայացուցիչները նպատակադրված են նոր կյանք տալ համակարգված ակադեմիական կրթությանը: Նման ծրագիրը հիմնավորվում և իր տեսքն է ստանում Ժ. Մաժոյի, Լ. Կրոյի, Ժ. Կապելի /Ֆրանսիա/, Գ. Կևելտի, Դ. Ռավիչի, Չ. Ե. Ֆիննի /ԱՄՆ/ և ուրիշների սոցիալ-մանկավարժական աշխատություններում:

Կրթության ռացիոնալիստական մոդելի մշակողները՝ /Պ. Բլում /, Ռ. Գանյե /ծնվ. 1916/, Բ. Սկիններ /ծնվ. 1904/ և ուրիշներ կենտրոնացրեցին իրենց ջանքերն առաջին հերթին գիտելիքների յուրացման, ինչպես նաև կրթության միջոցով երիտասարդությանը՝ գոյություն ունեցող հասարակությանը գործնականորեն ինտեգրելու խնդրի վրա: Նրանք պնդում էին, որ ցանկացած կրթական ծրագիր կարող է փոխակերպվել գիտելիքների, կարողությունների և հմտությունների, որոնց անհրաժեշտ է տիրապետել կրթության գործընթացում:

Կրթության վերաբերյալ այլ հայացքներ ունեն ֆենոմենոլոգիական ուղղության ներկայացուցիչները, որոնց մեջ անհրաժեշտ է նշել առաջին հերթին 20-րդ դարի ամերիկացի մտածող Ա. Մասլոուին: Նրանք դավանում են կրթության հումանիստական ուղղությանը: Նրանց դատողություններում կարմիր թելով անցնում է անհատականացված կրթության վերաբերյալ միտքը:

Կրթության ժողովրդավարական համակարգի գաղափարը ենթադրում է առաջին հերթին կրթության մատչելիություն, ուսումնական հաստատությունների ինքնավարություն, ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպվածություն, որի դեպքում ձևավորվում է ստեղծագործական ներուժով օժտված, ազատ և լայն մտահորիզոն ունեցող և գործող մարդ:

Ժամանակակից աշխարհում թեև մարդկությունը զգալի առաջընթաց է ապրել, սակայն կրթության կազմակերպման բազմաթիվ խնդիրների լուծումներ դեռևս գտնված չեն: Կրթության զարգացումն ընթանում է անընդհատ բարեփոխումների, որոնումների միջավայրում: Կան մի շարք հիմնարար խնդիրներ, որոնց շուրջ դեռևս ընթանում են որոնումներ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

1. Ներմշակութայնացում և անհատականացում:

Շատ մասնագետների կարծիքով, կրթության հիմնական նպատակը ներմշակութայնացումն է, այսինքն՝ երեխային որոշակի մշակութային համակարգին հարմարեցնելը: Ներմշակութայնացման մոտեցումը հիմնվում է մարդկանց նմանությունների վրա և փորձում է սերմանել համընդհանուր նորմեր ու արժեքներ: Նման մոտեցման արդյունքը միանման մտածող մարդկանց հասարակությունն է: Նման մոդելն իրականացվում էր խորհրդային տարիներին: Կար որոշակի արժեհամակարգ, որը կրթության միջոցով պարտադրվում էր սովորողներին: Եթե ներմշակութայնացման մոտեցումը հիմնվում է մարդկանց նմանությունների վրա, ապա անհատականացման մոտեցումը արժևորում է

մարդկանց տարբերությունները, ինքնատիպությունը՝ նպաստելով դրանց զարգացմանը: Անհատականացման մոտեցումը ենթադրում է կրթական համակարգի կառավարման ազատականացում, ուսումնական հաստատությունների ինքնավարության մեծացում, ուսուցման բովանդակության ոլորտում ստեղծագործական մտածողության խթանում: Նման մոտեցման պարագայում շատ կարևոր է հասարակության պատրաստակամությունը հանդուրժելու մարդկանց ինքնատիպությունն ու ազատությունը:

2. Հանրագիտարանային և նեղ մասնագիտական կրթություն:

Շուկայական հարաբերությունների զարգացումը և մրցակցության գործոնի կարևորումը էապես փոխեցին կրթության գործընթացից ակնկալվող արդյունքները: Եթե նախկինում հանրագիտարանային գիտելիքները, ընդհանուր զարգացվածության մակարդակը համարվում էին պահանջվող արդյունք, ապա վերջին ժամանակաշրջանում առավել կարևորվում է մասնագիտական կրթությունը: Ընդհանուր զարգացվածության նկատմամբ հետաքրքրության նվազումը հանգեցրեց հանրակրթության վիճակի վատթարացման: Հատկապես բարձր դասարաններում աշակերտները դժկամությամբ են սովորում այն առարկաները, որոնցից ընդունելության քննություններ չեն հանձնելու: Բայց 2-3 առարկայի վրա կենտրոնացումը հանգեցնում է մարդու մի տեսակի ձևավորման, որը 20-րդ դարի հայտնի գերմանացի փիլիսոփա Հերբերտ Մարկուզեն բնորոշել է որպես «միաչափ մտածող»:

3. Արտադրական, թե՞ ստեղծագործական մոդել:

20-րդ դարում մեծ տարածում գտավ կրթության արտադրական մոտեցումը: Այս մոտեցման պարագայում սովորողները դիտարկվում են որպես «հումք», մանկավարժները՝ «արտադրողներ»: Կրթության ոլորտում չափորոշիչների ներդրումը, արդյունքի վրա շեշտադրումը այդ մոդելի բաղկացուցիչներն են: Ինչպես արտադրողները պարտավոր են երաշխավորել ապրանքի որակը, այնպես էլ մանկավարժների առջև խնդիր է դրվում ապահովել որակյալ կրթություն և «թողարկել» բարձրորակ կադրեր: Ընդ որում, չափորոշիչների միջոցով սահմանվում է, թե կրթության տվյալ աստիճանում ինչ պահանջների պետք է բավարարի սովորողը: Այս մոտեցման ընդդիմախոսները խոսում են մարդու չափորոշայնացման անհնարինության մասին: Վերջին շրջանում մասնագետները հաճախակի են խոսում չափորոշիչների վրա հիմնվող կրթության անարդյունավետության մասին: Ավելին, խոսվում է չափորոշիչների վրա հիմնվող համակարգի վախճանի մասին: «Մենք մուտք ենք գործում հետստանդարտացման դարաշրջան: Թեստերի միջոցով բարելավման հասնելու մոտեցումն իրեն սպառել է: Ստեղծագործական աշխատանքը դասարաններից անհետանում է, դպրոցից դուրս մնացողների թիվն աճում է»:

Կրթական ոլորտում փոփոխությունները սովորաբար ունեն երկու աղբյուր:

Առաջինը պայմանականորեն կարելի է անվանել արտաքին աշխարհից եկող: Օրինակ՝ միջազգային պահանջներին համապատասխանելու համար մենք որոշակի փոփոխություններ ենք կատարում կրթության ոլորտում :

Փոփոխությունների երկրորդ աղբյուրը ներսից է գալիս: Մարդուն բնորոշ է ունենալ իդեալներ: Բայց, որպես կանոն, իրականությունը չի համապատասխանում մեր իդեալներին: Իրականությունը մեր իդեալներին համապատասխանեցնելու գործընթացն էլ ծնում է փոփոխությունների պահանջ:

Փաստորեն, առաջին դեպքում փոխում ենք ինչ-որ բաներ աշխարհին համաքայլ ընթանալու մղումով, երկրորդ դեպքում՝ մեր իդեալներն իրականություն դարձնելու համար: Պետք է արձանագրենք, որ վերջին տարիներին ավելի շատ խոսում ենք աշխարհին համահունչ

գնալու պահանջից բխող, քան մեր իդեալներից բխող փոփոխությունների մասին: Մենք ավելի շատ ջանքեր ենք գործադրում հասկանալու համար, թե մեզանից ինչ են ուզում, քան այն հարցի վրա, թե մենք ինչ ենք ուզում: Որքան էլ կարևոր են փոփոխությունների արտաքին աղբյուրները հաշվի առնելը, այդուհանդերձ, ոչ մի փոփոխություն իրական ու արդյունավետ չի լինում, եթե չի ներդաշնակվում ներքին պահանջների հետ: Ինչպես նշում է կրթության կանադացի հայտնի մասնագետ Մայքլ Ֆուլլանը. «Կրթական բարեփոխումների արդյունքը մեծապես կախված է այն բանից, թե ինչ են մտածում և անում ուսուցիչները»:

Ցանկացած փոփոխություն նշանակում է անցում: Կրթական բարեփոխումների երկընտրանքներից մեկը «շատ արագ» և «շատ դանդաղ» մոդելների միջև է: Ինչպես նշում են Ֆուլանն ու Սքոթը, երբ բարեփոխումների առաջնորդը «փորձում է արագ շարժվել, գործող մշակույթը ապստամբում է և նման դեպքերում առաջնորդը հեռանում է: Դանդաղ շարժվելու դեպքում գործող մշակույթը կլանում է առաջնորդին և ոչինչ չի փոխվում» :

Կրթական բարեփոխումների մի քանի մոդելներ կան: Առավել տարածված է վերևից-ներքև մոդելը: Այս պարագայում բարեփոխումները նախաձեռնում են կառավարիչները: Վերև-ներքև մոդելի առավելությունն այն է, որ բարեփոխումները շատ ավելի համակարգված են ընթանում և հավասարապես ներառում են բոլոր հաստատությունները: Այս մոդելը կարող է ցանկալի արդյունքների բերել նաև այն դեպքում, երբ վերևները դրսևորում են պլանավորման, իրականացման բարձր հմտություններ: Բացի այդ, վերև-ներքև մոդելը ավելի հարմար է, երբ խնդիր է դրված ավելի կարճ ժամանակում իրականացնելու փոփոխություններ: Այս մոդելի թերությունն այն է, որ կրթական համայնքի զգալի հատվածը բարեփոխումները դիտարկում է որպես վերևից պարտադրվող նախաձեռնություն և չի դառնում դրա կրողը: Մյուս թերությունն էլ այն է, որ տարբեր հաստատություններ բարեփոխիչների կողմից միջամտության տարբեր աստիճանի կարիք են ունենում: Օրինակ՝ ներկայումս Հայաստանում գյուղական և քաղաքային դպրոցների նկատմամբ կա հավասարարական վերաբերմունք: Մինչդեռ գյուղական դպրոցները, գտնվելով կենտրոնից ավելի հեռու, ավելի շատ բարեփոխվելու կարիք ունեն:

Ժամանակակից մանկավարժությունը մշտապես նորացվում և թարմացվում է:Այսօր ուսուցումն ու դաստիարակությունը դիտարկվում է որպես կրթության հումանացման գործընթաց, որն ուղղված է անձի մշակութային և հոգևոր կերպարի զարգացմանը:Հասարակական հարաբերությունների ամբողջ համակարգի հումանացումը դիտարկվում է որպես ժամանակակից հասարակության զարգացման գերակա գործոն:

Հումանիզմը մարդու՝ որպես անհատի արժեքը, ազատ զարգանալու և սեփական ընդունակությունները բացահայտելու իրավունքն ընդունակող հայացքների հանրագումարն է: Հումանացումը մարդասիրության՝ որպես մարդկանց կենսագործունեության իրական հիմքի ամրապնդումն է, որն առնչվում է համամարդկային արժեքների գերակայության, մարդու ընդունակությունների ազատ զարգացման իրավունքի ընդունման հետ:Կրթության հումանացումը ենթադրում է կրթության բովանդակության մեջ մշակութային բաղադրիչի զարգացում, որը նպատակաուղղված է հասարակական հարաբերություններում և կրթական համակարգում կենտրոնական տեղ գրավող անձի կատարելագործմանը, նրա ճանաչողական և ստեղծագործական ընդունակությունների, ինքնուրույնության զարգացմանը շարունակական կրթության ձգտման խթանմանը:

Ժամանակակից մանկավարժությունը, հետևելով մարդասիրական ուղղվածությանը, մասնագիտական գործունեությունը դիտարկում է որպես երեխայի անձի դաստիարակության և ինքնազարգացման միջոց[1,224]:

Այսպիսով, մանկավարժի պահանջներն ու նպատակները պետք է համատեղվեն սովորողների ցանկությունների ու նպատակների հետ:Մանկավարժական կրթությունն այսօր դիտարկվում է որպես հումանիտար կրթություն, որը հնարավորություն է տալիս շրջանավարտին աշխատել, համագործակցել մարդկանց հետ՝ փոխանցելով մշակութային արժեքային համակարգ, ինքնադրսևորվան ձևեր: Ուստի ժամանակակից մանկավարժական ուսումնական հաստատությունն ավարտած շրջանավարտը տիրապետում է ոչ միայն մասնագիտական ոլորտին, այլև կարող է գործել ավելի լայն շրջանակներում՝ աշխատել «մարդ-հասարակություն-մարդ» համակարգում:

Մանկավարժական ոլորտում շատ կարևոր է աշխատանքի արժեքային համակարգի և բարոյական նորմերի ընդունումը:Այսօրվա մանկավարժը պետք է օժտված լինի մարդկանց հասկանալու, ընդունելու, աջակցելու կարողությամբ: Եվ ինչպես Վ.Ա. Սուխոմլինսկին էր նշում,-«Երեխայի համար ամենալավ ուսուցիչը նա է, ով հոգեպես շփվելով նրա հետ մոռանում է, որ ինքն ուսուցիչ է, և իր աշակերտների մեջ տեսնում է ընկերոջ, համախոհի: Այդպիսի ուսուցիչը գիտի իր սաների սրտի ամենանվիրական անկյունները»[5,204]:

Ժամանակակից փոփոխվող աշխարհը, գիտատեխնիկական առաջընթացը, համաշխարհային զարգացումների դարաշրջանը, որը խորհրդանշվում է նոր գիտելիքների ինտենսիվ ստեղծմամբ, իր ազդեցությունն է ունենում նաև կրթության ոլորտի վրա: Արդի պայմաններում կրթության դերի վերափոխումն ու որակի բարելավումը դառնում են անհրաժեշտություն: Այսօր կրթության դերն աճում է, և այն «վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային որակներ»: Այսօր անհրաժեշտ է, որ մարդ ունենա ոչ միայն գիտելիքների որոշակի պաշար, այլև կարողանա այդ գիտելիքները համապատասխանաբար կիրառել: Արդի հասարակության մեջ ապրող մարդուն անհրաժեշտ են հաղորդակցվելու, համագործակցելու, ուրիշի կարծիքը լսելու և գնահատելու, իր տեսակետը հիմնավորելու, ինքնուրույն դիրքորոշում ունենալու, իր որոշումները գնահատելու ու դրանց համար պատասխանատվություն կրելու կարողություններ ու հմտություններ: Վերը նշված որակների արդիականությունն ու կարևորությունը շեշտվում է ժամանակակից մանկավարժ Տ. Պ. Սալնիկովայի կողմից. «Կրթության առաջնային խնդիրը պիտի դառնա ոչ թե աշակերտների կողմից որոշակի գիտելիքների պաշարի, կարողությունների ու հմտությունների յուրացումը, այլ ինքնուրույն սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու ու այն վերամշակելու, կարևորը առանձնացնելու, դրանք հիշելու և իր իմացածի հետ կապ ստեղծելու աշակերտի կարողությունը»:

Ժամանակակից աշխարհում կրթությունը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ որպես հանրային կրթության հիմնական օղակի, նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Այսպես, ամերիկացի սոցիոլոգ Ն. Ամեզերը ազգային որակյալ կրթությունը բնորոշում է որպես մարդկային, քաղաքացիական, քաղաքական, տնտեսական ու մշակութային իրավունքների իրականացման հիմնարար պայման, որի շնորհիվ էլ ներկայումս, կրթությունը

համարվում է ազգի մտավոր զարգացման գլխավոր գործոնն ու նրա ինքնուրույնության պահպանման երաշխիքը, հատկապես՝ իր մրցունակության ապահովման առումով:Ազգային որակյալ կրթությունը, ըստ նրա, նպաստում է ժողովրդավարության զարգացմանն ու հասարակության համախմբմանը, շնորհիվ այն բանի, որ ձևավորում և դաստիարակում է լավ իրազեկված քաղաքացիներ, որոնց այլևս հնարավոր չէ հիմարացնել ամբոխավարությամբ և լոզունգներով4:Նման բնորոշումն արդի փուլում գործնական քայլեր կատարելու նախապայման է[6,158]:

Չինացի մտածող և փիլիսոփա Կոնֆուցիուսին, երբ հարցրել են, թե ի՞նչ է անհրաժեշտ պետության ծաղկման համար, պատասխանել է, որ անհրաժեշտ է երեք բան. 1, Շատ հաց: 2. Ուժեղ բանակ:3.Ուղեղների համապատասխան վիճակ: Վերջինը, անկասկած, անմիջականորեն պայմանավորված է կրթության (հանրակրթական եւ բարձրագույն) ժամանակակից մակարդակով [4,52]:

Որպես պետականության կայացման երաշխիք, այսօր կրթական համակարգի պահպանումը, նրա հետագա զարգացումը, մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում համարվում է ազգային կարևորության խնդիր: Արդի պայմաններում այդ խնդրի իրագործումը հնարավոր է հանրակրթական ոլորտի բարեփոխումների միջոցով: Կրթության համակարգի բարեփոխումների անհրաժեշտությունը կանխորոշվում է երկրի փոփոխվող սոցիալ-քաղաքական,տնտեսական վիճակով ,հասարակության զարգացման մակարդակով: Յուրաքանչյուր հասարակություն իր վրա պարտավորություն է վերցնում ապահովել վաղվա իր քաղաքացու ձևավորման և զարգացման գործընթացը,որի համար և հաշվետու է դառնում հետագա սերունդների առջև: Գաղտնիք չէ,որ վաղվա քաղաքացու ձևավորման գործընթացի իրականացման ու պատասխանատվության առավել գործնական մասը պատկանում է դպրոցին: Կրթության համակարգի բարեփոխումները պահանջում են վերանայել ոչ միայն կրթության կառուցվածքը, գործառության կազմակերպման հիմքը, այլև ամենակարևորը՝ հանրակրթության բովանդակությունը: Այն բխում է կրթության նպատակներից և խնդիրներից, իսկ կրթության նպատակներն ու խնդիրները սահմանվում է հասարակական զարգացման յուրաքանչյուր փուլին համապատասխան: Բարեփոխվող դպրոցը ենթադրում է կրթության բովանդակության վերանայում, օրինաչափ վերակառուցում, շարունակական գործընթաց[3,84]:

Կրթության բովանդակության վերափոխման անհրաժեշտությունը գիտակցում են թե՛ մասնագետները, թե՛ ուսուցիչները, և թե՛ ծնողները: Նրանցից յուրաքանչյուրն ունի յուրովի մոտեցում և տեսակետ:

Բարեփոխված դպրոց պետք է մտնի այն ուսուցիչը, ով տիրապետում է զարգացնող ուսուցման նորագույն տեխնոլոգիաներին, ով կարող է պահպանել և զարգացնել աշակերտների հետ բարոյական-արժեքային հարաբերություններ, որը և թույլ կտա բավականին ուժեղացնել նրա աշխատանքի զարգացնող և դաստիարակող ուղղվածությունը:

Կրթությունը դիտարկվում է որպես երիտասարդ սերունդներին անցյալի մշակույթի և արժեքային համակարգի փոխանցման յուրահատուկ գործիք: Ավանդականության ներկայացուցիչները նպատակադրված են նոր կյանք տալ համակարգված ակադեմիական կրթությանը:

Մանկավարժության արդի հիմնախնդիրների մեջ անձնակողմնորոշված մոտեցումը, այսպիսով, գրավում է ուրույն տեղ: Նրա նպատակն է ձևավորել այնպիսի անհատ, քաղաքացի, որն ունի ակտիվ քաղաքացիական դիրքորոշում, համակարգային և քննադատական

մտածողություն, սոցիալական ու էկոլոգիական կոմնորոշում, արդյունավետ հաղորդակցվելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու կարողություններ: Անձնակողմնորոշված մոտեցումը դարձել է կրթական նորմատիվային փաստաթղթերի նոր սերնդի հիմքը: Անձնակողմնորոշված մոտեցումը, բնականաբար, փոխում է նաև ուսուցչի գործառույթները: Ուսուցչի գլխավոր խնդիրն է դառնում սովորողի անձի զարգացման համար համապատասխան պայմանների՝ ուսումնական միջավայրի ստեղծումը[5,186]:

Յուրաքանչյուր հասարակության զարգացման գլխավոր նախապայմանը կրթությունը և կրթական համակարգն են, քանի որ դպրոցը հասարակական, սոցիալական փորձի փոխանցման ամենահիմնական օղակն է: Առանց մարդկային հասարակության՝արդեն ձեռք բերված փորձը նոր սերնդին փոխանցելու հասարակությունը չի կարող վերարտադրել ինքն իրեն: Այս պարագայում կրթությունը ոչ թե որոշակի գիտելիքների,կարողությունների ու հմտությունների ձեռքբերումն է ոչ միայն, այլ նաև հոգևոր,մշակութային զարգացումը: Հայտնի է, որ հասարակական բարեկեցությունը, զարգացումն ու բարգավաճումը ուղիղ համեմատական են նրա յուրաքանչյուր անդամի կրթվածության աստիճանին:

Կրթական համակարգը որպես հասարակական ինստիտուտ, բոլոր ժամանակներում և բոլոր հասարակություններում հանրության, պետության պատվերն է կատարել և կատարում անկախ նրանից այն գիտակցվել կամ պաշտոնապես ձևավորվել է, թե ոչ [2,186]: Որպես հասարակական համակարգի մաս, այն չի կարող անկախ լինել նույն այդ հասարակությունից, պետության հասարակական ու քաղաքական կառուցվածքից: Դպրոցն էլ, որպես կրթական համակարգի հիմնական, բազային օղակ, կրթության նպատակները սահմանում է՝ ելնելով այդ հասարակական պատվերից: Հետևաբար, հասարակության սոցիալական ուղղվածության փոփոխությունը բերում է նաև կրթության նպատակների փոփոխության: Այսօր աշխարհում կրթության նպատակներն արտացոլում են մանկավարժության, կրթության փիլիսոփայության մեջ հումանիստական ուղղության գաղափարները:

Կրթության հիմնական նպատակներն ուղղված են անձի ձևավորմանն ու զարգացմանը: Կրթության մեջ անձի զարգացման նկատմամբ անձնակենտրոն մոտեցումն առավել լիարժեքորեն է արտացոլում դպրոցական կրթության ժամանակակից նպատակները:

Այսպիսով, կրթական համակարգը կոչված է ձևավորել այնպիսի անհատներ,որոնք ի վիճակի կլինեն կատարելագործել ու զարգացնել հասարակությունը, այսինքն՝ ձևավորել լիարժեք զարգացած անձնավորություն:

Անհատի կատարելագործումն ու զարգացումը ենթադրում են նախ և առաջ նրա բարոյական և հոգևոր հիմքերի զարգացում: Մարդն իր բնույթով հասարակական ազատ էակ է: Իր ազատությունից ճիշտ օգտվել կարողանալու համար նա պետք է ենթարկվի որոշակի կարգ ու կանոնի, հասարակության մեջ արժանապատվորեն ապրելու համար պետք է ունենա որոշակի բարոյական սկզբունքներ, իսկ առավել լիակատար ու լիարժեք զարգացման համար մարդուն որոշակի մտավոր և բարոյական հիմքեր են անհրաժեշտ:

Կրթական բարեփոխումների համատեքստում այսօր շեշտը դրվում է թե՛ կրթության, թե՛ ինքնակրթության, ինքնազարգացման ու ինքնակատարելագործման վրա: Ուստի դպրոցը պետք է կարողանա դառնալ սովորողների ինքնազարգացող, ինքնակատարելագործվող համայնք, ինչը կնպաստի երեխաների զարգացնող կրթության համար համապատասխան միջավայրի ստեղծմանը: Աշակերտն աշխատում է լայն տեղեկատվական դաշտում, տեղեկատվության տարբեր տեսակետների հետ, որի արդյունքում ձևավորվում է սեփական տեսակետը: Տեղեկատվության հետ նման ակտիվ աշխատանքի արդյունքում խթանում է սովորողների

ինքնուրույն, քննադատական, ստեղծագործական մտածողությունը:

Քննադատական մտածողությունը հնարավորություն է տալիս մարդուն ակտիվորեն աշխատել տեղեկատվության հետ, այսինքն վերլուծել տեղեկատվությունը, ընտրել իրեն անհրաժեշտ փաստերը, տրամաբանորեն իմաստավորել դրանք, եզրահանգումներ ու ընդհանրացումներ անել, կուրորեն չհավատալ հեղինակություններին, կյանքում հասարակական, քաղաքական, մշակութային զանազան երևույթների մասին սեփական տեսակետ ձևավորել:

Ստեղծագործական մտածողությունը մարդուն հնարավորություն է տալիս կանխատեսել այս կամ այն երևույթի, իրադարձության զարգացումը, նոր գաղափարներ ստեղծել, սեփական տեսակետն ու դիրքորոշումը հիմնավորելու համար փաստեր ու փաստարկներ գտնել, ձեռք բերած գիտելիքները կիրառել այլ՝ ոչ ստանդարտ իրավիճակներում, մտավոր փորձարարություն անել:

Քննադատական մտածողություն հնարավոր է ձևավորել նյութը պրոբլեմային ձևով մատուցելու, հակասական տեսակետներ ներկայացնելու, «կասկած սերմանելու», սովորողներին լրացուցիչ տեղեկատվություն որոնելու անհրաժեշտության առաջ կանգնելու միջոցով: Ստեղծագործական մտածողությունը ձևավորվում է որոշակի, երբեմն նաև յուրօրինակ մոտեցում պահանջող խնդիրների և ինքնադրսևորման, ինքնիրացման պահանջմունքի առկայության պայմաններում:

Մարդու կրթությունը չի կարող ավարտվել դպրոցական կամ մասնագիտական կրթությամբ նախ և առաջ այն պատճառով, որ գիտության, մշակույթի, պատմության շատ փաստեր, երևույթներ չեն կարող խորությամբ ու անհրաժեշտ չափով ու ձևով յուրացվել աշակերտի կամ ուսանողի կողմից հենց թեկուզ տարիքային զարգացման առումով: Դրանք մենք հետագայում՝ հասուն տարիքում, ավելի խորն ու ավելի հիմնավոր ենք իմաստավորում ու յուրացնում: Սովորողի ինքնուրույն մտածողության զարգացումը նույնպես լիարժեք չի կարող ձևավորվել կենսափորձի սակավության պատճառով: Սրա զարգացումն էլ պետք է շարունակական ու անընդհատ լինի: Էլ չենք խոսի այն մասին, որ կյանքի, հասարակական հարաբերությունների,գիտության ու մշակույթի զարգացման արդյունքում այնքան արագ է փոփոխվում տեղեկատվական դաշտը, որ թեկուզ միայն մասնագիտական որակի պահպանման համար անհրաժեշտ է մշտապես, պարբերաբար լրացնել գիտելիքները, նոր տեղեկատվություն ձեռք բերել, երբեմն նաև հարկադրված փոխել մասնագիտական կողմնորոշումը:

Ահա թե ինչու դպրոցական կրթությունն այսօր դիտարկվում է որպես բազային, հիմնարար կրթություն, որը ենթադրում է շարունակություն հետագա ողջ կյանքի ընթացքում:

Այսպես կրթական համակարգն ամբողջական,բայց բաց համակարգ է, որի գլխավոր առանձնահատկություններից մեկն այսպես կոչված, «տեղեկատվությունն է»: Նոր հազարամյակում հազիվ թե հնարավոր լինի կրթության նպատակը սահմանափակել մարդկության կուտակած տեղեկատվությունը յուրացնելու և փոխանցելու առաքելությամբ: Մանավանդ, որ օր օրի այդ տեղեկատվության ծավալն աճում է երկրաչափական պրոգրեսիայով և սպառնում է աստղաբաշխական չափերի հասնել: Ուստի հարցի լուծումը չի կարող սովորողներին մատուցվող տեղեկատվության ծավալի մեծացումը լինել:

Ահա թե ինչու ժամանակակից կրթական համակարգում գլխավորը ոչ թե տեղեկատվությունը յուրացնելու, այլ դրա հետ ակտիվ աշխատելը պետք է լինի, որն էլ հենց ենթադրում է ինքնուրույն քննադատական և ստեղծագործական մտածողություն: Միայն գիտելիքների և սեփական փորձառության ակտիվ ձեռքբերումը, դրանց կիրառման հիման վրա

նորանոր գիտելիքների ինքնուրույն յուրացումը կարող է համապատասխանել ժամանակակից մարդու պահանջմունքներին:

Այս տեսակետից է, որ կրթական համակարգը չի կարող սահմանափակվել տեղեկատվության ավանդական աղբյուրներով, որոնք են՝ ուսուցիչը, դասագիրքը, ուսումնական և տեղեկատու ձեռնարկները, մանավանդ, որ այդ աղբյուրները կարող են արտացոլել սոսկ դրանց հեղինակների տեսակետներն ու մոտեցումները: Մինչդեռ տեղեկատվության հնարավորինս տարբեր ու բազմազան աղբյուրները կարող են նույն հարցի, խնդրի մասին միանգամայն տարբեր մոտեցումներ ու տեսակետներ ներկայացնել: Միայն այդ պարագայում է, որ սովորողները սեփական մտածողությունը խթանող ճանաչողական կշռադատման նյութ են ունենում, ճշմարտության, փաստերի, փաստարկների ինքնուրույն որոնման միջոցով փորձում են հաստատել կամ ժխտել այս կամ այն գաղափարն ու տեսակետը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թոփուզյան Ա.Օ. Հումանիստական դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության մեջ«Լինգվա» հր: Երևան, 2009,էջ 224:
2. Սիմոնյան Ց., Հայ մանկավարժության պատմություն: Երևան: «Արարատ» հր., 2006, էջ 186:
3. Վարդումյան Ս., Քսանմեկերորդ դարի մանկավարժական տեսություններ, Երևան,«Նոյյան Տապան» հր., 2005,էջ 84:
4. Зубова Л.В. и др. Антропологические основания образования /Оренбург ООИУУ, 1998,ст. 52:
5. Сластенина В.А. , Колесниковой И.А.. Воспи тательная деятельность педагога: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / под общей редакцией. – Москва: Изд.-во «Академия», 2005,ст.186,2004:
6. Джуринский А. Н. Развитие образование в современном мире, М.изд. центр ВЛАДОС 2013, ст. 158:

РЕЗЮМЕ

Способы улучшения системы образования

Эллада Багдасарян

Ключевые слова: развитие современного образования, мировой уровень, широкомасштабный процесс, технологическая революция, социальный, педагогические требования, мировая педагогика, развитие школы, положительная тенденция, гуманизация образования, обеспечение подхода направленного на личность.

Развитие современного образования это многогранный, широкомасштабный процесс. Образование постоянно преобразовывается, совершенствуя содержание, пытаясь приблизиться к современным социальным, политическим и педагогическим требованиям технической и технологической революции. Гуманизация образования и обеспечение подхода, направленного на личность, являются важными, позитивными тенденциями развития мировой педагогики и школы.

Преодоление критических явлений и продвижение в сфере образования происходит на основе преобразования старого, представления новых принципиальных подходов, а так же при помощи внедрения иного смысла в педагогику и образование.

SUMMARY

The Ways to Improve the Educational System

Ellada Baghdasaryan

Keywords: development of the modern education, world level, large-scale process, technological revolution, social, pedagogical demands, world pedagogic, development of school, positive tendencies, humanization of the education, assurance of an approach directed to a person.

The development of the modern education is a world-level, multisided, large-scale process. The education changes permanently, improves the content trying to approach to modern, social, political and pedagogical demands of technical and technological revolution. Humanization of the education and assurance of an approach directed to a person are among the positive tendencies of the development of world pedagogic and school.

The overcoming of critical facts and development in education take place on the improving of old one, presenting of new principal approaches, as well as providing new meaning into pedagogics and education.